Ազգ
Azg

21 ՄԱՐՏ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 50(4902)

ISSN: 1829-1651

## Թշնամանքի «ասպետություն»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարեւան երկրի լրատվամիջոցներից մեկի տեղեկացվածությամբ, ամենամոտ ժամանակներս «իշխանությունների կողմից կստեղծվի նոր հեռուստաընկերություն, որը կոչված կլինի Իրանի դեմ հակաքարոզչություն իրականացնելու»: Նման նախագծի մասին, հարկ է նկատել, Բաքվում հայտնի է դառնում այն բանից հետո, երբ Ադրբեջանի ԱԳՆ մամլո խոսնակը Իրանի հետ հարաբերությունները գնահատել էր «բարիդրացիական»: Խոսք չկա՝ «գերազանց բարիդրացիություն է», մանավանդ ադրբեջանական մամուլը հեղեղած հրապարակումների ֆոնի վրա, որոնք կանխագուշակում են «մոլլապետական ռեժիմի շուտափույթ կործանում»:

Ադրբեջանում, իհարկե, «բացատրություն» գտնվել է: Իշխանամերձ պատգամավոր եւ Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի նախագահ Սաբիր Ռուստամխանլին ասել է, որ չնայած «գործադրած ջանքերին, չի հաջողվել կասեցնել Իրանում հակաադրբեջանական քարոզչությամբ զբաղվող «Սահար» հեռուստաընկերության գործունեությունը»: Ակնարկն, ինչպես ասվում է նման դեպքերում, չափազանց թափանցիկ է. «եթե իրանական «Սահար»-ը չի փակվում, ապա Ադրբեջանն էլ պետք է ստեղծի դրա համարժեքը»:

Խնդիրն այն է, սակայն, որ «Սահար»-ը գործում է իբրեւ Իրանի էթնիկ ադրբեջանցիների հեռուստաընկերություն եւ հեռարձակում է ադրբեջաներենով: Բաքուն պաշտոնապես հանդես է գալիս որպես Իրանի էթնիկ ադրբեջանցիների «իրավունքների ջատագով», բայց գործնականում դեմ է, որպեսզի այդ փոքրամասնությունը հեռուստաընկերություն ունենա, քանի որ վերջինիս հաղորդումներն «ունեն հակաադրբեջանական ուղղվածություն»:

Նման եւ այլ հարցերում կողմերի տեսակետները չեն համընկել տարիներ ի վեր: Այդ դեպքում ինչո՞ւ մինչ Իրանի շուրջն իրավիճակի սրումը Բաքուն որեւէ հակաքայլ չէր ձեռնարկում: Պատճառն ակնհայտ է. իշխող վարչակազմը գիտակցում էր, որ Իրանի պատասխան գործողություններն իր համար կարող են ճակատագրական լինել: Այսօր նա վստահ է, քանի որ ունի «բավարար երաշխիքներ»: Ադրբեջանի ԱԱ նախարարության ձեռնարկած վերջին քայլերի կապակցությամբ «Զերկալո»-ի մեկնաբանին Թուրքիայի ԱԳՆ «մի բարձրաստիճան պաշտոնյա» անթաքույց ասել է, որ «դա վկայում է երկու երկրների հարաբերությունների խզման մասին, իսկ նման քայլի Բաքուն չէր գնա առանց դաշնակիցների հետ խորհրդակցությունների, իսկ նրա դաշնակիցները Թուրքիան եւ ԱՄՆ-ն են»:

Տես էջ 3

# «1915-ին քեմալականներից շատերը հարստացել են, թերեւս դա է պատմության հետ Թուրքիայի առերեսման դժվարությունը»

*Հարցազրույցում ասում է Թաներ Աքչամը՝ պարզաբանելով փոխհատուցման իմաստը*

Հ. ՉԱՔՐՅԱՆ



«**Ազգի**» մարտի 16-ի համարում թուրքական իրականության առանձնահատկությունը դարձած հայատյացության դրսեւորումներին անդրադառնալիս, որոնք ամենայլանդակ տեսքով արտահայտվել էին Խոջալուի «կոտորածի» այսպես կոչված ոգեկոչման ստամբուլյան հանրահավաքում, ընդարձակ մեջբերումներ էինք արել Թաներ Աքչամի հետ «Թարաֆի» հարցազրույցից, հրապարակված՝ այդ թերթի մարտի 12-ի համարում:

Թղթակցի հարցերին ի պատասխան Աքչամն ասում էր, որ մոտենում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, ուստի հանրահավքը կազմակերպվել է 2015-ին ընդառաջ, հայերի կոտորածին բացի պետությունից մասնակցել է նաեւ թուրք հասարակությունը, հայերի ունեցվածքը լուրջ դեր է խաղացել Անատոլիայում հայկական կոտորածների կազմակերպման առումով, մարդիկ, մտածելով, թե գալու են իրենց ձեռքից խլելու հարստությունը, վախենում են փոխհատուցումից, եթե օրակարգի խնդիր դառնա, ապա փոխհատուցման գործընթացն այդպիսի զարգացում չի ունենալու:

Ակամա հարց է ծագում. ինչպիսի՞ զարգացում է ունենալու: Հարցին Աքչամը պատասխանում է հարցազրույցի «Թարաֆ» թերթի մարտի 14-ի համարում հրապարակված 3-րդ մասում: Հարցազրույցի այս հատվածում թղթակցուհու հարցերն արտացոլում են 2015-ի շեմին Թուրքիայի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի առավել ծավալումից, եւ դրա հետեւանքներից բխող մտավախությունները, իսկ Աքչամը պատասխաններով շարադրում է Ցեղասպանության ճանաչումից հրաժարվելու հետեւանքները Թուրքիայի համար, փոխհատուցման հավանական տարբերակները, Ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ քեմալականների դիրքորոշումն ու պատմության հետ առերեսման առջեւ կանգնած խոչընդոտները:

Շարադրանքն ամբողջությամբ առնչվում է Ցեղասպանության հետեւանքների վերացման Աքչամի տեսակետներին, իսկ հետեւանքների վերացումը, իբրեւ առանձին հարց, հավանաբար միջազգային օրակարգ կմտնի աշխարհում Ցեղասպանության լիարժեք ճանաչումից հետո: Անկախ Աքչամի պատասխանների բնույթից, շոշափվող թեման հետաքրքրական է, ուստի հարցազրույցի 3-րդ հատվածը ներկայացնում ենք հարցուպատասխանի ձեւով:

Տես էջ 3

## Իրան-Երեւան ավտոբուսը վթարի է ենթարկվել՝ կան զոհեր եւ վիրավորներ

Ինչպես տեղեկանում ենք իրանահայ համայնքի Hyeli.net կայքից, Իրանի հյուսիսում՝ Մառանդ-Ջուլֆա մայրուղու 30-րդ կիլոմետրին վթարի է ենթարկվել Իրան-Երեւան ուղեւորափոխադրում իրականացնող ավտոբուսը, որը պատկանում է «Դիդար սէյրէ գիթի» ընկերությանը: Ըստ նախնական տեղեկությունների, վթարը տեղի է ունեցել ավտոբուսի անվադողի պայթյունի հետեւանքով: Ավտոբուսում ուղեւորների մեծ մասը իրանցիներ են եղել: Վթարի հետեւանքով 3 հայ է զոհվել: Այդ տեղեկությունը նաեւ հաստատեց Հայաստանի արտգործնախարարության խոսնակ **Տիգրան Բալայանը**: Վիրավորվել են 15-ը, որոնց թվում են հայեր՝ Հակոբ Մարտիրոսյան, Լիանա Բարսեղյան, Մարիանա Պետրոսյան, Ստեփանոս Պետրոսյան, Բենիամին (Միքայել) Ազամալյան: Բժիշկները վիրավորների վիճակը կայուն են գնահատում: Իսկ երեք զոհերի ինքնությունը հայտնի է, նրանք Իրանի հայազգի քաղաքացիներ են:

Ս. Ս.



## 4 տարվա ազատազրկում՝ ոստիկանության գեներալ-մայորին. դատավճիռը՝ մարտի 23-ին

«Առաջարկում եմ Հովհաննես Թամամյանին դատապարտել 4 տարվա ազատազրկման եւ պատժի սկիզբը համարել 2011թ. մարտի 24-ը»:

Սա ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հարություն Հարությունյանի միջնորդության վերջին հատվածն էր՝ ուղղված Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Վարդանյանին:

ՀՀ քրեական հետախուզության գլխավոր վարչության նախկին պետ Հովհաննես Թամամյանի գործով անցնող մեղադրյալներ, ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ բաժնի պատասխանատու Արմեն Պողոսյանի եւ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւորագույն գործերի վարչության ավագ քննիչ Վահան Խանզադյանի համար դատախազը միջնորդեց 2 տարի պայմանական դատավճիռ:

Պաշտպանական ճառն ու դատավճռի հրապարակումը տեղի կունենան մարտի 23-ին:

Դատական նիստի ավարտին դահլիճից հեռանալիս Հովհաննես Թամամյանը ներկաներին համբերության կոչ արեց, իսկ նրա պաշտպանը՝ Վաղինակ Գեւորգյանը զարմանք ու զայրույթ հայտնեց դատախազի միջնորդության վերաբերյալ: Պաշտպանին հատկապես զարմացնում է, որ դատախազն իր պաշտպանյալի համար 4 տարվա ազատազրկում է պահանջել, մինչդեռ գործով անցնող մյուս երկու մեղադրյալներին՝ պայմանական ազատազրկում:

Թեեւ փաստաբանը դատախազի միջնորդության հիմքում քաղաքական որեւէ միտում չի տեսնում, սակայն հավելում է, որ որոշված է Թամամյանին դատել:

«**Ազգ**»-ն արդեն տեղեկացրել է, որ Թամամյանը մեղադրվում է պաշտոնական պարտականությունները չկատարելու, անձնական շահագրգռվածությունից ելնելով դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու համար, որն առաջացրել է ծանր հետեւանքներ: Նախորդ դատական նիստի ժամանակ վերոնշյալ երեք ամբաստանյալներն էլ ընդունեցին իրենց հասցեագրված մեղադրանքը՝ դատարանից պահանջելով արագացված դատաքննություն:

Հ. Հ.

## Մեխանիզմները՝ ռազմական փորձագետների «կատարելագործման» տակ

Հակամարտության լուծումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տեսնում են միայն խաղաղ ճանապարհով: Այս մասին եւս մեկ անգամ հիշեցրել է Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ, Ռուսաստանի ԱԳՆ հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Իգոր Պոպովը «ՌԻԱ նովոստի» գործակալությանը տված հարցազրույցում:

Խոսելով ղարաբաղյան խնդրի կարգավորման՝ փակուղային վիճակում գտնվելու գնահատականների առնչությամբ՝ նա հիշեցրել է նաեւ «Մեծ ութնյակի» գագաթժողովի շրջանակներում ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների նախագահների Դովիլյան հայտարարությունը, ըստ որի «Ուժի կիրառումը հանգեցրել է ներկայիս առճակատմանն ու անկայունությանը, դրա կրկնությունը միայն նոր տառապանքներ կբերի ու կդատապարտվի միջազգային հանրության կողմից»:

Պոպովը նաեւ ընդգծել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ տարբեր հանդիպումներում արտահայտած պատրաստակամությունը՝ «արագացնելու հիմնարար սկզբունքների համաձայնեցման հասնելու գործընթացը»: Ու թեեւ ամեն անգամ Ալիեւը համաձայնություն տալով՝ հետագայում հրաժարվել է իր իսկ ստորագրած հայտարարություններից, ռուս դիվանագետը երկու նախագահների «պատրաստակամությունը» մեկնաբանել է նաեւ որպես «բանակցային գործընթացից սպասվող արդյունք ստանալուն ուղղված ջանքեր գործադրելու պատրաստակամության վկայություն»:

Թե ինչո՞ւմ է Պոպովը տեսել Ադրբեջանի պատրաստակամությունը, դժվար է ասել, դրա փոխարեն, նա հավաստիացրել է, թե տարաձայնությունների բերող հարցերը, «արդեն իսկ համաձայնեցվածների համեմատությամբ, շատ չեն, բայց դրանք առավել բարդերն են»:

Առավել հետաքրքրական է, որ, Պոպովի տեղեկացմամբ, շփման գծի միջադեպերի հետաքննության մեխանիզմների ստեղծման գործընթացն ընթացքի մեջ է, ավելին, այն «կատարելագործվում է» ռազմական փորձագետների կողմից:

«Կարծում եմ, մեխանիզմի փաստացի գործարկումը թույլ կտա նվազեցնել զինադադարի ռեժիմի խախտման դեպքերի թիվը, որոնց պատճառով մարդիկ են զոհվում, այդ թվում՝ քաղաքացիական բնակչությունը, նաեւ երեխաներ», նշել է ռուս դիվանագետը, որպես փաստ ներկայացնելով այն, ինչ ադրբեջանական կողմը ստի ու կեղծարարության միջոցով փորձում է ներկայացնել որպես այդպիսին: Պոպովին թերեւս ավելորդ չի լինի հիշեցնել, որ հատկապես երեխաների մահվան դեպքերի առնչությամբ նույն այդ հայտարարությունները կարիք ունեն հետաքննության, որից հետո միայն կարելի կլինի խոսել դրանց «իսկության» մասին:

Համանախագահի համար բնավ էլ ոչ հարիր բացթողումներով հանրությանը ներկայացնող Պոպովն, այդուհանդերձ, հարցազրույցի ավարտին հույս է հայտնել, թե «կողմերի կառուցողական մոտեցման դեպքում» այս տարի կհաջողեն ավելի առաջանալ, քան նախորդ տարի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ազգային ժողովի վերջերգերը

## Արտակարգ դրության վերաբերյալ օրենքի ընդունումը ծանրացավ




Երեկ Ազգային ժողովում քվեարկությունների ժամանակ, երբ հերթը հասավ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի երկրորդ ընթերցմամբ քվեարկությանը, ԱԺ նախագահ **Սամվել Նիկոյանը** հայտարարեց, որ այդ պահին քվեարկությունները ավարտվեցին: Այս օրինագիծը հասարակական հնչեղություն է ստացել եւ միանշանակ չի ընդունվում. հավանաբար օրինագծի ընդունմամբ շահագրգիռ ԱԺ ղեկավարությունը նկատեց, որ այն հազիվ թե անհրաժեշտ ձայներ ապահովի, քանի որ հատկապես ՀՀԿ-ի կոալիցիոն երկու գործընկեր կուսակցությունների պատգամավորներից շատ բացականեր կային: Մինչ այդ էլ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** 20 րոպե ընդմիջում էր վերցրել՝ հավանաբար կամ քվեարկողների անհրաժեշտ թիվ ապահովելու, կամ էլ որոշելու՝ ինչպե՞ս վարվել: Երեւի հենց այդպես էլ որոշել են՝ այս մի օրինագիծը քվեարկել այսօր առավոտյան, անհրաժեշտ թվով պատգամավորներ այս նախընտրական-կրակ ժամանակաշրջանում Ազգային ժողովում քվեարկողների բավարար թիվ ապահովելով:

### ԱԺ նախագահը՝ ՀՀԿ համամասնական ցուցակում իր տեղի մասին

Լրագրողները երեկ ԱԺ նիստի ընդմիջմանը հետաքրքրվեցին ԱԺ նախագահ Ս. Նիկոյանից, թե ի պաշտոնե երկրի երկրորդ դեմքի՝ համամասնական ցուցակում 5-րդ տեղում լինելը վիրավորական չէ՞: **Ս. Նիկոյանն**, ի տարբերություն լրագրողների, այդ փաստը վիրավորական չի համարում. ընդհակառակը, նա հիշեց եւ լրագրողներին հիշեցրեց, որ խորհրդարան գալիս անցյալում եղել է 24-րդ հորիզոնականում, այնպես որ այս անգամ առաջադիմել է անգամ: Սակայն նախորդ անգամ նա հասարակ ՀՀԿ-ական էր:

### Ընդդիմության հացը մի կտրեք

Կոալիցիոն իշխանությունների ներկայացուցիչները կտրում են ընդդիմության հացը, այնպիսի պաթոսով են երբեմն քննադատում, որ մարդ շփոթվում է՝ մտածելով, թե Հայաստանում գործել են ընդդիմադիր ուժեր, որոնց մասին մարդ տեղյակ չէր մինչեւ հիմա: Այս միտքը հնչեցրեց երեկ ընդդիմադիր «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր **Արմեն Մարտիրոսյանը** ԱԺ հայտարարությունների ժամին: Նա, իհարկե, հնչող քննադատությունների բերած փաստերին համաձայն է, բայց եւ նրան անսովոր է թվում, որ կոալիցիայի ներկայացուցիչներ կան, ովքեր իրավիճակը ներկայացնում են «Ժառանգության» պատգամավորների պես: Մինչդեռ հենց նրանք են այնպես արել, այնպիսի օրենքներ ընդունել, որ մեր քաղաքացիները արտագաղթեն կամ ընդդիմադիր դառնան, դատարաններում անարդար վճիռներ կայացվեն, մարդիկ գերակա շահի անվան տակ զրկվեն ունեցվածքից. «Իհարկե, կարող եք մխիթարվել՝ ձեր ներկա պահվածքը նոր չէ աշխարհում: Այն արձանագրված է անգամ Ավետարանում՝ փարիսեցիություն անվամբ, բայց քրիստոնեավայել է նաեւ մեղքերն ընդունելը», դիմեց պատգամավորը կոալիցիայի ներկայացուցիչներին՝ նշելով, որ աղետալի իրավիճակի մեղավորությունն ընդունելու դեպքում հնարավոր է, որ մեր հայրենակիցները ներեն նրանց:

Ս. Խ.

ՏՈՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

# ՕԵԿ-ը հրապարակեց համամասնական ցուցակն ու մեծամասնականով առաջադրվողների անունները

Երեկ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում «Օրինաց երկիր» կուսակցությունը տոնում էր իր 15-ամյակը: Հենց այդ տոնական մթնոլորտում էլ կուսակցության նախագահ **Արթուր Բաղդասարյանը**, ընդգծելով, որ ՕԵԿ անդամ են այսօր 160 հազար ՀՀ քաղաքացիներ, ներկայացրեց «Օրինաց երկիր» կուսակցության համամասնական ցուցակը: Առաջին 15 անունները հետեւյալներն են.

1. Արթուր Բաղդասարյան
2. Հեղինե Բիշարյան
3. Արմեն Երիցյան (արտակարգ իրավիճակների նախարար)
4. Սերգո Կարապետյան (գյուղատնտեսության նախարար)
5. Նելսոն Զոլյան (Սորբոնի համալսարանի շրջանավարտ)
6. Դիանա Բիազյան (Նյու Յորքի համալսարանի շրջանավարտ)
7. Մանուկ Վարդանյան (տրանսպորտի նախարար)
8. Դավիթ Կարապետյան (ՊՆ նախկին մամլո քարտուղար)
9. Խաչիկ Հարությունյան (ԱԺ պատգամավոր)
10. Նատալյա Ադամյան (Անտվերպենի համալսարանի շրջանավարտ)
11. Միեր Շահգելդյան (ՕԵԿ փոխնախագահ)
12. Հովհաննես Մարգարյան (ԱԺ պատգամավոր)
13. Սամվել Թադեւոսյան
14. Իշխան Խաչատրյան (ԱԺ պատգամավոր)
15. Տիգրան Ղալեչյան

Լրագրողների հետ զրույցում ՕԵԿ համամասնական ցուցակից **Դավիթ Կարապետյանը** նշեց, որ ինքը օրերս է անդամակցել ՕԵԿ-ին, եւ առաջարկը եղել է հենց կուսակցությունից. «Ես ինձ միշտ տեսել եմ քաղաքականությունում, եւ արտասահմանում ստանալով լավ կրթություն, կարծում եմ, որ կարող եմ նպաստել մեր երկրի զարգացմանը»:

Մեծամասնական կարգով ՕԵԿ-ն առաջադրում է հետեւյալ անձանց.

Էդուարդ Մադաթյան
Կարեն Բոթոյան
Արմեն Հարությունյան
Հունան Պետրոսյան
Ալբերտ Այվազյան
Արթուր Միսակյան
Դեզի Հովհաննիսյան
Վահե Հայրապետյան
Հայկ Հովհաննիսյան

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# ԿԸՀ-ն կքննարկի Խաչատուր Սուքիասյանի դիմումը

Այսօր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քննարկվելու է մեծամասնական կարգով պատգամավորության թեկնածու առաջադրվելու համար փաստաթղթեր ներկայացրած Խաչատուր Սուքիասյանի դիմումը, որով նա, հղում անելով օրենսդրությանը եւ մի շարք փաստերի, խնդրում է գրանցել իրեն որպես պատգամավորի եւ հաշվի չառնել անձնագրային եւ վիզաների վարչության ուղարկած գրությունը, ըստ որի նա 5 տարի անընդմեջ չի բնակվել Հայաստանում:

Ս. Խ.

# Փակ դուռը բացեց նռնակով... ու ձերբակալվեց




Մեր շրջապատում հաճախ ենք հանդիպում այնպիսի երեւույթների, որոնք զայրույթ ու զարմանք են առաջացնում, հատկապես երբ դրանցում խառնված են այնպիսի երիտասարդներ, որոնք ամենուր բղավում են՝ «մեր դեմ խաղ չկա»: Պարզվում է, որ այդպես է: Ամիսներ առաջ երիտասարդ աղջկան դանակահարած 29-ամյա Վարդան Դեմիրճյանը իր արարքի համար պատիժ չի կրել ու շարունակել է նման կեցվածքը: Մարտի 20-ի գիշերը, ժամը 1-ին Վարդանը «տրամադրությունը բարձր» ցանկացել է մտնել Աբովյան փողոցում գտնվող «Ալեն-Էլեն» դիսկո-ակումբ: «**Ազգը**» տնօրենի հետ զրույցից տեղեկացավ, որ շենքի անվտանգության աշխատակիցները, ճանաչելով Վարդանին, նրան թույլ չեն տվել մտնել ակումբ, որպեսզի չխանգարի զվարճացողներին: Երիտասարդը վիրավորվածի կեցվածք է ընդունել, հայհոյել է ու ահաբեկել. «Ես քիչ հետո կգամ ու կտեսնեք ձեր հալը...»: Մոտ 30 րոպե անց Վարդանը կրկին մոտեցել է շենքին ու քաշելով նռնակի օղակը, այն շպրտել է շենքի 2-րդ հարկի ուղղությամբ: Նռնակի հարվածից կոտրվել են ապակե պատուհանները, պայթյունից բռնկվել է հրդեհ 2-րդ հարկի հյուրանոցային 4 սենյակներում եւ միջանցքում: Այրվել է գույքը, հրդեհը տարածվել է մոտ 200 քմ մակերեսով: Տնօրենը անմիջապես զանգահարել է հրշեջ ծառայություն, շտապօգնություն եւ ոստիկանություն: Մինչ հրշեջների գալը անվտանգության աշխատակիցները օգնել են 3-րդ հարկի դիսկոտեկում զվարճացողներին տարհանել: Ահազանգից րոպեներ անց դեպքի վայր են հասել երեք մարտական հաշվարկ, մեկ ավտոսանդուղք: Հրդեհը մեկուսացվել է եւ մարվել 01.35-ին: Հրդեհի հետեւանքով տարբեր աստիճանի այրվածքներով այրվածքային կենտրոն են տեղափոխվել ԻԻՀ քաղաքացիներ Նարիման Սալեհիպուրը, Ալիռեզա Մինային, Ահմեդ Փուլադբուզը: Իսկ Նասիսե Քոնզադին, Զահրո Ասադը, Նազդե Նեմալը, Գարիուսի Մարիամը, Հուսեին եւ Ֆաթիմա Թայլիները եւ ՀՀ քաղաքացի Վահե Միրաքյանը ծխահարվել են: Ըստ բժիշկների, տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

Ոստիկանության ծառայությունների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, լուսադեմին՝ ժամը 08-ի սահմաններում, Արգավանդ գյուղի «Օջախ» ռեստորանային համալիրի մոտից ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման են ենթարկել 1983 թ. ծնված Վարդան Դեմիրճյանին, որի մոտից հայտնաբերվել է գաղտնի փականով դանակ: Վարդան Դեմիրճյանը ձերբակալված է: Հարուցվել է քրեական գործ ՀՀ քր.օր. 34-104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 6-րդ կետերի, 185 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 235 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# ԲՀԿ համամասնական ընտրացուցակի առաջին քսանյակը

Երեկ ուշ երեկոյան «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղխորհրդի նիստը, որը հաստատել է կուսակցության համամասնական ընտրացուցակը, որը ըստ ոչ պաշտոնական աղբյուրների ունի հետեւյալ տեսքը:

**1. Գագիկ Ծառուկյան**
**2. Վարդան Օսկանյան**
**3. Վարդան Վարդանյան**
**4. Գուրգեն Արսենյան**
**5. Սամվել Բալասանյան**
**6. Նաիրա Զոհրաբյան**
**7. Վահե Հովհաննիսյան**
**8. Հարություն Քուշքյան**
**9. Հմայակ Հովհաննիսյան**
**10. Միքայել Մելքոնյան**
**11. Ստեփան Մարգարյան**
**12. Էլինար Վարդանյան**
**13. Արթուր Թամազյան**
**14. Արամ Սաֆարյան**
**15. Խաչիկ Գալստյան**
**16. Թամարա Պողոսյան**
**17. Վահե Էնֆիաջյան**
**18. Ռուբեն Գեւորգյան**
**19. Վահան Բաբայան**
**20. Տիգրան Ուրիխանյան**

# Փետրվարին 6,3 տոկոս տնտեսական ակտիվության աճ

## *Հունվար-փետրվարին՝ 5,6 տոկոս աճ*

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակած 2012-ի փետրվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 6,3 տոկոս: Հիշեցնենք, որ 2011-ից Ազգային վիճակագրական ծառայությունն անցել է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես, դադարեցվել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվել է տնտեսական ակտիվության ցուցանիշը:**

**Ամենամեծ աճը շարունակում է արձանագրվել արդյունաբերությունում՝ 16,2 տոկոս նախորդ տարվա փետրվարի համեմատ եւ 4,5 տոկոս աճ 2012-ի հունվարի նկատմամբ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 30,3 տոկոսով, հունվարի նկատմամբ՝ 0,4 տոկոսով: Շինարարությունն ունեցել է 0,5 տոկոս անկում, իսկ հունվարի նկատմամբ 25,1 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա փետրվարի նկատմամբ 9,7 տոկոս աճ է արձանագրվել, իսկ հունվարի նկատմամբ՝ 7,3 տոկոս անկում: Մանրածախ առեւտրում արձանագրվել է չնչին՝ 1,2 տոկոս աճ, իսկ հունվարի նկատմամբ գրանցվել է 22 տոկոս աճ: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը մնացել է անփոփոխ, իսկ հունվարի նկատմամբ աճել՝ 42,6 տոկոսով:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2012-ի փետրվարին 2011-ի փետրվարի նկատմամբ ավելացել է 17 տոկոսով եւ կազմել 431 մլն դոլար: 2012-ի հունվարի նկատմամբ աճը կազմել է 24,2 տոկոս: Արտահանումը կազմել է 112,4 մլն դոլար, արձանագրելով 20,1 տոկոս աճ, իսկ 2012-ի հունվարի նկատմամբ՝ 54,7 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 318,6 մլն դոլար, աճելով 15,9 տոկոսով, իսկ 2012-ի հունվարի նկատմամբ՝ 16,1 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 206 մլն դոլար:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում փետրվարին կազմել է մոտ 114 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 138 հազար դրամ, պետականում՝ 95 հազար դրամ:**

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է նաեւ 2012-ի հունվար-փետրվար ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշները եւ դրանք համադրել 2011-ի հունվար-փետրվարի հետ: Համաձայն դրանց, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2012-ի հունվար-փետրվարին կազմել է 5,6 տոկոս:**

**Արդյունաբերությունում աճը կազմել է 18,5 տոկոս, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 23,3 տոկոս, շինարարությունն ունեցել է 0,1 տոկոս անկում, ծառայությունների ոլորտում արձանագրվել է 9,8 տոկոս աճ, մանրածախ առեւտրում՝ 0,6 տոկոս աճ, գյուղատնտեսությունում՝ անփոփոխ՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2012-ի հունվար-փետրվարին 2011-ի հունվար-փետրվարի նկատմամբ ավելացել է 11,6 տոկոսով եւ կազմել մոտ 778 մլն դոլար: Արտահանումը կազմել է 185 մլն դոլար, արձանագրելով 12,3 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 593 մլն դոլար, աճելով 11,4 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը այս տարվա հունվար-փետրվարին կազմել է 408 մլն դոլար:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-փետրվարին կազմել է մոտ 113 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 138 հազար դրամ, պետականում՝ 92 հազար դրամ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Ցեղասպանության ժխտողականության քրեականացման հարցը Ֆրանսիայում չի լուծվել, այլ հետաձգվել է»

Այդ մասին մարտի 19-ին Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի պաշտոնական կայքէջում գրել է պաշտոնաթող դեսպան Օմեր Էնգին Լյութեմը, որը երկար տարիներ ղեկավարում էր Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտը:

Լյութեմը գրում է, որ ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի մերժումը Ֆրանսիայի Սահմանադրական դատարանում գոհունակություն պատճառեց Թուրքիային եւ տպավորություն ստեղծեց, թե այդ հարցը ընդմիշտ լուծված է: Մինչդեռ հարցը չի լուծվել, այլ ընդամենը հետաձգվել է մինչեւ նախագահական, ապա եւ խորհրդարանական ընտրությունների ավարտը:

Նա այս տեսակետը հիմնավորելու համար մատնացույց է անում նախագահ Սարկոզիի նոր օրինագիծ պատրաստելու հրահանգը կառավարությանը, Մարսելում հայ համայնքին այցելելը, այնուհետեւ Փարիզում Ելիսեյան պալատում ֆրանսահայերի պատվին տված ընդունելությունն ու այնտեղ օրինագծի առնչությամբ տված խոստումները: Ապա Լյութեմը շարունակում է. «Նախագահ Սարկոզին հայ համայնքի առջեւ այնպիսի պարտավորություններ ստանձնեց, որ հետագայում հազիվ թե ի վիճակի լինի հրաժարվել: Հետեւաբար Սարկոզիի վերստին նախագահ ընտրվելու պարագայում Թուրքիան շարունակելու է խնդիրներ ունենալ Ֆրանսիայի հետ, ընդ որում՝ ոչ միայն Հայկական հարցի, այլեւ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցելու առնչությամբ»:

Լյութեմը Թուրքիայի համար բարենպաստ չի համարում նաեւ Ֆրանսիայի նախագահի պաշտոնում Սոցիալիստական կուսակցության թեկնածու Ֆրանսուա Օլանդի ընտրությունը, ընդգծելով, որ Օլանդը խոստացել է ընտրվելու դեպքում օրինագծին հետամուտ լինել պաշտոնավարման հենց սկզբում, այլ ոչ թե 5 տարիների ընթացքում, ուստի 2012-ին Թուրքիան կարող է դեմ հանդիման կանգնել նոր օրինագծին:

Այնուհետեւ Լյութեմն ավելացնում է. «Սոցիալիստական կուսակցությունը դեմ չէ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը: Սակայն Օլանդը, մարտի 12-ին հանդիպելով Ֆրանսիայում գործող հայկական կազմակերպությունների համակարգման խորհրդի ներկայացուցիչներին, ասաց, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես ԵՄ-ին անդամակցության նախապայման է առաջադրելու Թուրքիային: Նա միաժամանակ պետական աջակցություն է խոստացել Հայոց ցեղասպանության թանգարանին, որի բացումը Ֆրանսիայում նախատեսվում է 2015-ին: Այսպիսով, Ֆրանսիայի նախագահի պաշտոնի երկու գլխավոր հավակնորդներն էլ ստանձնում են հայերի պահանջները լիարժեք կատարելու պարտավորություն»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

# «Բի Դի Օ»-ն Հայաստանում գտել է հուսալի գործընկեր

## *Ի դեմս «Ամերիա աուդիտի»*

**Հայաստանում աուդիտորական գործունեություն ծավալելու նպատակով աշխարհի խոշորագույն 5-րդ՝ «Բի Դի Օ» ընկերությունը ձեռք է բերել «Ամերիա աուդիտ» ընկերությունը: Դա «Բի Դի Օ»-ի առաջին ներդրումն է Հայաստանում, բայց առաջիկայում ընկերությունը մտադիր է ընդլայնել իր գործունեությունը նոր ձեռքբերումներով: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նշեցին «Բի Դի Օ»-ի միջազգային կապերի գծով գործընկեր Ալեքսանդր Վերենկովը, «Ամերիա» խմբի զարգացման գծով տնօրեն Տիգրան Ջրբաշյանը եւ «Բի Դի Օ Արմենիա»-ի տնօրեն Արթուր Անդրեասյանը:**




Բացելով մամուլի ասուլիսը՝ «Ամերիա» խմբի զարգացման գծով տնօրեն **Տիգրան Ջրբաշյանն** ասաց, որ «Ամերիա աուդիտը», հանդես գալով նոր ապրանքանիշով, կնպաստի Հայաստանի աուդիտի շուկայում մրցակցությանը, ինչպես նաեւ կներդնի «Բի Դի Օ»-ի հարուստ միջազգային փորձն ու ստանդարտները մեր երկրում:

«Բի Դի Օ»-ի միջազգային կապերի գծով գործընկեր **Ալեքսանդր Վերենկովը** նշեց, որ ընկերության հետաքրքրությունները Հայաստանում բիզնես սկսելու վերաբերյալ շատ տարիներ առաջ են սկսվել: Ըստ նրա, Հայաստանի եւ Ռուսաստանի ֆինանսատնտեսական հատվածները փոխկապակցված են, այդ պատճառով էլ այստեղ բիզնես սկսելու որոշումը «Բի Դի Օ»-ն համարել է որպես առաջնահերթություն: Ըստ Ալեքսանդր Վերենկովի, դժվար էր գործընկեր գտնելը, բայց իրենք գոհ են, որ, ի դեմս «Ամերիա աուդիտի» գտել են նորարարական, հուսալի գործընկերոջ: Նրա հավաստիացմամբ, «Բի Դի Օ»-ն ոչ միայն նոր ստանդարտներ եւ փորձ է բերելու Հայաստան, այլ նաեւ եկել է սովորելու այստեղ: «Այն հաջողությունները, որ հասել է «Ամերիան» Հայաստանում, հնարավորություն է տալիս հուսալու, որ մեր գործընկերությունը հաջող կլինի», նշեց «Բի Դի Օ»-ի միջազգային կապերի գծով գործընկերը:

«Բի Դի Օ Արմենիա»-ի տնօրեն Արթուր Անդրեասյանը տեղեկացրեց, որ այս համագործակցությունը փոխշահավետ է, եւ «Բի Դի Օ Արմենիա»-ն պատրաստ է ծառայություններ մատուցել ամենատարբեր ոլորտներում հանդես եկող առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպություններին, պետական ընկերություններին, անհատ ձեռնարկատերերին եւ անհատ հարկ վճարողներին:

Ներկայացնելով «Բի Դի Օ» ընկերությանը, Արթուր Անդրեասյանը հայտնեց, որ այն ստեղծվել է 1963-ին, 1988-ին կազմավորվել է ընկերության միջազգային կառուցվածքը: Ընկերության ստեղծած ցանցը շարունակելով զարգանալ, 2009-ին վերանվանվեց BDO («Բի Դի Օ»): Ներկայումս ընկերությունը գործում է աշխարհի 135 երկրներում, ունի 1118 գրասենյակներ ու 48,8 հազար աշխատակիցներ: 2011-ի արդյունքներով «Բի Դի Օ» ցանցի անդամ բոլոր ընկերությունների ընդհանուր եկամուտը կազմել է 5,6 մլրդ դոլար: «Բի Դի Օ Արմենիա»-ի տնօրենի ներկայացմամբ, ընկերության գործունեությունն առանձնանում է ծառայությունների ճկուն գներով եւ բարձր որակով, հաճախորդների հանդեպ մոտեցմամբ:

Ա. Մ.

# Թշնամանքի «ապետություն»

*1-ին էջից*

Անհավանական չէ, որ հակաիրանական քարոզչության հեռուստաընկերությունն էլ Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների, Իսրայելի հետ համաձայնությամբ կամ հենց այդ երկրների հրահանգով է հիմնադրվում: Ավելի ճիշտ, դա արդեն Իրանի դեմ քարոզչական պատերազմում Ադրբեջանի ներգրավվածությունն է փաստում: Եվ դա՝ տառացիորեն մի քանի օր առաջ Թեհրանում Սաֆար Աբիեւի այն հայտարարությունից հետո, թե «Ադրբեջանը երբեք իր տարածքը չի տրամադրի Իրանի դեմ թշնամական գործողությունների»:

Երեւույթը որքան ցինիկ, նույնքան էլ ողբերգական է: Բացառված չէ, որ Ադրբեջանն իրոք չէր ցանկանա հակաիրանական արշավում ներգրավված լինել: Բայց ի՞նչ կարող է անել խամաճիկ վարչակազմը, եթե նրա «հեռակառավարման վահանակը» գտնվում է Երուսաղեմում: Կամ՝ Անկարայում: Կամ՝ Վաշինգտոնում: Կամ էլ երեք մայրաքաղաքներում՝ միաժամանակ: Բավական է մի թեթեւակի շեղում, եւ արեւմտյան մամուլն իսկույն Իլհամ Ալիեւին կոչում է իսկական անունով՝ «կոռումպացված բռնապետ»:

Եվ ահա «նորին բռնապետական մեծություն» Իլհամ Ալիեւը խաղալիք է դարձել օտարերկրյա հատուկ ծառայությունների, անդրազգային կորպորացիաների ձեռքին: Եվ պարտադրված խաղում է հերթական ֆարսը. նա որոշել է նոր հեռուստաընկերությունը կոչել... «BA» TV: Հապավումը եթե բացենք, կստացվի «Բութով Ազարբայջան», թարգմանաբար՝ «Միասնական Ադրբեջան» հեռուստաընկերություն: Այդ անվամբ «հասարակական կազմակերպություն» Բաքվում գործում է վերոհիշյալ Սաբիր Ռուստամխանլիի նախագահությամբ: Նա էլ, ամենայն հավանականությամբ, կգլխավորի նոր հեռուստաընկերությունը: Չէ՞ որ Ռուստամխանլին «բոցաշունչ» բանաստեղծ է, Հեյդար Ալիեւի կառավարությունում զբաղեցրել է տեղեկատվության եւ քարոզչության նախարարությունը:

Ամեն ինչ չափազանց ակնհայտ է: Բացի մի բանից. ի՞նչ ճակատագիր է իրականում Ադրբեջանին սպասում, եթե Իրանի շուրջը խաղաղ կարգավորման հնարավորություններն իրոք սպառվեն եւ բանը հասնի ուժի փոխադարձ գործադրմանը:

# «1915-ին քեմալականներից շատերը հարստացել են, թերեւս դա է պատմության հետ Թուրքիայի առերեսման դժվարությունը»

*1-ին էջից*

**- Մոտենում է ապրիլի 24-ը: Հայկական հարցն աշխարհում վերստին կմտնի՞ օրակարգ:**

- Այո, առավելագույն ձեւով, որովհետեւ բոլորն ատամ են սրում:

**- Ձեր կարծիքով, Հայկական հարցի առնչությամբ այս տարի ի՞նչ կանի ԱՄՆ-ը:**

- Հավանաբար նոր բան չի անի, որովհետեւ 2012-ին ԱՄՆ-ում նախագահական ընտրություններն են: Ընտրություններից առաջ Օբաման հազիվ թե փոխի վերաբերմունքը, բայց 2015-ին, իմ համոզմամբ, նա կարտասանի ցեղասպանություն բառը:

**- Ի՞նչ կփոխվի, եթե ԱՄՆ-ը ճանաչի Ցեղասպանությունը:**

- Շատ բան, որովհետեւ միջազգային ասպարեզում Թուրքիան կարողանում է ազատ խաղալ՝ շնորհիվ ԱՄՆ-ի, Անգլիայի եւ Իսրայելի թույլտվության: Եթե այս եռյակը ճանաչի Ցեղասպանությունը, ապա Թուրքիան այսքան անկաշկանդ ձեւով խաղալ չի կարողանալու: Ժխտողականությունը աշխարհում կմեկուսացնի Թուրքիային: Նա կհայտնվի Հարավային Աֆրիկայի Հանրապետության երբեմնի ռասիստական կարգավիճակում կամ կնմանվի մեր օրերի Հյուսիսային Կորեային: Պարտադիր չէ, որ Թուրքիան եւս «Ցեղասպանություն» ասի: Սակայն նա պարտավոր է 1915-ը ընդունել որպես մարդկության դեմ կատարված մեծագույն հանցագործություն եւ ներողություն խնդրել:

**- Մեր հողերում կոտորածի հետեւանքով հարստության տերերը փոխվեցին: Ներողություն խնդրելու դեպքում մի՞թե չի առաջանա հայկական ունեցվածքը վերադարձնելու եւ փոխհատուցում վճարելու խնդիրը:**

- Երբ Աթաթուրքը ափ իջավ Սամսունում (1919-ի մայիսի 19-ին, սկսելու ազգային պատերազմները), նամակով դիմեց քուրդ աղաներին եւ զգուշացրեց. «Հայերը կգան եւ հետ կվերցնեն իրենց ունեցվածքը»: Հայերի վերադարձը եւ իրենց ունեցվածքին տեր կանգնելու վախը լուրջ ազդակ հանդիսացավ ազատագրական պատերազմում: Ունեցվածքն իրականում անհնար է վերադարձնել, թող ոչ ոք չխաբի թուրք մարդուն: Փոխհատուցման հարցը հնարավոր է լուծել երկու կառավարությունների բանակցություններով միայն: Ընդ որում՝ լուծումը պետք է բավարարի երկու հասարակություններին էլ: Դրան կարող է հասնել երկու կառավարությունների կազմած համատեղ հանձնաժողովը, որի քննարկումները մատչելի պետք է լինեն հասարակությանը, որովհետեւ փոխհատուցումը բարոյական կատեգորիա է, զուտ փող չի ենթադրում:

**- Ի՞նչ պետք է հասկանալ փոխհատուցում ասելով:**

- Ներողություն խնդրելը, Անատոլիայում առկա հայկական հետքը երեւան հանելը, Հայաստանին սոցիալ-տնտեսական օգնություն տրամադրելը, նրան Տրապիզոնի նավահանգստից օգտվելու հնարավորություն տալը կամ, ինչպես Հրանտ Դինքն էր առաջարկում, Եվրոմիությանը Հայաստանի հետ համատեղ անդամակցելու Թուրքիայի պատրաստակամությունը:

**- Ինչո՞ւ Թուրքիան չի կարողանում լուծել Հայկական հարցը: Դրան խոչընդոտում են Ադրբեջանի հետ հարաբերություննե՞րը:**

- Դա, ինչ խոսք, դեր խաղում է: Սակայն կան մի քանի այլ պատճառներ: 90 տարի շարունակ մեր պետությունը սուտ է ասել մեզ: Մարդկանց ուղեղը լվացել են ազգայնամոլությամբ: Եթե պետությունը 90 տարի հետո ասի, որ սուտ է խոսել, ապա մարդիկ կզայրանան: Դրա հետ Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների մի զգալի հատված, ցավոք, մասնակցել է 1915-ին կամ էլ հարստացել այդ թվերին:

**- Մենք գիտենք, որ հայերի ունեցվածքը եղել է երկրի երեկվա եւ այսօրվա մեծահարուստների հարստացման աղբյուրը: Մե՞ծ է նրանց թիվը ազգային պայքարը ձեռնարկողների (նկատի ունի քեմալականներին) մեջ:**

- Այո, սրանք իթթիհադական կադրերն են: Զինադադարից հետո (1918-ի հոկտեմբերի 30-ին) կամ մնալու էին Ստամբուլում եւ 1915-ի պատճառով դատաստանի առջեւ կանգնելու, կամ էլ անցնելով Անատոլիա՝ դառնալու էին ազգային ազատագրության հերոս: Նրանք նախընտրեցին 2-րդ տարբերակը: Իհարկե ասածս բոլորին չի վերաբերում: Բոլորն անխտիր մեղավոր չեն: Սակայն կա մի ստվար հատված, որը 1915-ին ուղղակի մասնակցել կամ 1915-ին հարստացել է: Ներկա պահին հենց դա է 1915-ի հետ առերեսման գլխավոր դժվարությունը:

ԱԶԳ **Միջազգային**

# Վախճանվել է ղպտի պատրիարք Շենուդա Գ-ն

## Եգիպտոսում քրիստոնյաների ապագան անորոշ է



Տասնյակհազարավոր ղպտի հավատացյալներ Կահիրեի Աբբասեա մայր տաճարում վերջին հրաժեշտն են տալիս իրենց պատրիարք Շենուդա Գ-ին, որը վախճանվեց շաբաթ երեկոյան 88 տարեկան հասակում: Փարիզի «Ֆիգարո» թերթը ընդգծում է, որ Եգիպտոսի քրիստոնյա բնիկների՝ ղպտիների մեծամասնությունը նրան համարում է անփոխարինելի հոգեւոր առաջնորդ: Այդուհանդերձ, հարկ կլինի ընտրել նոր հովվապետ. «Աստծո կամքը» կատարելով՝ մի երեխա իրավահաջորդի անունը կհանի երեք թեկնածուների անունների միջից:

Պատրիարքի մահը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Եգիպտոսում ղպտի համայնքը իսլամիստ ծայրահեղականների հարձակումների թիրախն է դարձել:

Ըստ «Ֆիգարոյի», արաբական աշխարհում ղպտիները կազմում են ամենամեծ քրիստոնյա համայնքը. Եգիպտոսի 85 միլիոն բնակիչների մեջ նրանց բաժինը 6-10 տոկոս է:

1971-ից գահակալած Շենուդա Գ-ն պատրիարքը սահմանազատվել էր իր նախորդներից, աչքի ընկնելով ոչ միայն հոգեւոր, այլեւ քաղաքական գործունեությամբ: Հայտնի են նրա բարդ հարաբերությունները նախագահ Անվար էլ Սադաթի հետ: 1981-ին նա Վադի Նատրուն վանքում (Կահիրեից հյուսիս) արգելափակվեց վարչակարգի բացահայտ քննադատության եւ ղպտիների հանդեպ վարվող խտրականության քաղաքականության դատապարտման համար:

Պատրիարքը քննադատել էր նաեւ Սադաթի օրոք Իսրայելի հետ կնքած Քեմփ Դեւիդի հաշտության համաձայնագրերը: Դրանից հետո նրա համակիրներն էին դարձել նաեւ հակաիսրայելական տրամադրություններ ունեցող բազմաթիվ մահմեդական եգիպտացիներ:

Շատերը նրան համարում էին հեղափոխական, որը համարձակվում է քննադատել նույնիսկ նախագահին:

1985-ին նախագահ Հոսնի Մուբարաքի օրոք արդարացվելով՝ պատրիարքը դարձավ նրա աններող աջակիցը, նույնիսկ նրա դեմ ուղղված հեղափոխության ամիսներին: Նա ղպտիներին կոչ արեց չմասնակցել հեղափոխությանը: 2011-ի տարեվերջին՝ Սուրբ Ծննդյան տոնի օրը նա գեներալներին շնորհակալություն հայտնեց Եգիպտոսում անվտանգության ապահովման համար, հարուցելով մի խումբ երիտասարդ ղպտի հեղափոխականների դժգոհությունը:

Իր կամքի համաձայն՝ պատրիարքը կթաղվի Վադի Նատրում վանքում: Նրան երկու ամսով կփոխարինի ամենատարեց արքեպիսկոպոսը՝ մինչեւ հաջորդ պատրիարքի նշանակումը:

Շենուդա Գ-ն իրենից հետո թողնում է մտահոգ ղպտի համայնք, որի ապագան անորոշ է: Եթե Հոսնի Մուբարաքի օրոք ղպտիները խտրականության էին ենթարկվում գլխավորապես սրբավայրերի կառուցման ոլորտում, ապա 2011-ի հեղափոխությունը դրան ավելացրեց եկեղեցիների եւ վանքապատկան կալվածքների վրա կատարվող ավազակային հարձակումները: Վերջիններս հատկապես շատ են Վերին Եգիպտոսում, որտեղ ղպտիներն ավելի մեծ տոկոս են կազմում:

Պ. Ք.

# Մոսկվա եւ Դամասկոս. «Սիրիայում ռուսական ռազմանավ չկա»

Որոշ լրատվամիջոցներում հայտնված տեղեկությունների համաձայն, Սիրիայի ափերի մոտ կառանված են ռուսական ռազմանավեր՝ հատուկ ջոկատների մարտիկներով եւ հակաահաբեկչական պայքարի խմբով, որի մեջ մտնում են Սեւծովյան նավատորմի ծովային հետեւակի գրոհային գումարտակի զինծառայողներ: Արաբական աղբյուրներին այդ մասին պատմել են սիրիական ընդդիմության ներկայացուցիչները: Եվրոմիությունը Ռուսաստանին արդեն նախազգուշացրել է, որ զորք չուղարկի Սիրիա:

Սակայն ՌԴ պաշտպանական գերատեսչության մամլո ծառայության եւ տեղեկատվության վարչության ներկայացուցիչը ԻՏԱՌ-ՏԱՍՍ եւ Ինտերֆաքս գործակալություններին տված հարցազրույցում հայտարարել է. «Սիրիայի ափերի մոտ Ռուսաստանի ծովուժի որեւէ ռազմանավ չկա»: Պաշտոնյան ավելացրել է, որ արաբական որոշ լրատվամիջոցների հրապարակումները տարակուսանք են առաջացրել ՌԴ պաշտպանության նախարարությունում: Այնտեղ պարզաբանել են, որ սիրիական Տարտուս նավահանգստում արդեն 10 օր գտնվում է օժանդակ նավատորմի «Իման» տանկերը, որը կատարում է լոկ թիկունքային ապահովման խնդիրներ:

Մասնավորապես «Իմանը» համալրում է ՌԴ Սեւծովյան եւ Հյուսիսային նավատորմերի այն ռազմանավերի նյութական պաշարները, որոնք Ադենի ծոցում մասնակցել են հակածովահենային առաքելությանը: Վարչության պաշտոնյան ընդգծել է, որ տանկերի անձնակազմում քաղաքացիական անձինք են. զինված միայն «Իմանի» պահակային ստորաբաժանումը:

Մարտի 20-ին Սիրիայի պաշտպանության նախարարության աղբյուրներից մեկը նույնպես հերքել է երկրի ափերի մոտ ռուսական ռազմանավերի գոյությունը: «Այդ տեղեկությունը բնավ ճիշտ չէ եւ տարածվել է մեր շրջանում եւ աշխարհում Սիրիայի դեմ թշնամական ընդհանուր արշավ ծավալած մի շարք երկրների ջանքերով, դրանց նպատակը օտարերկրյա ռազմական միջամտությունն է Սիրիայում», հայտարարել է այդ երկրի պաշտպանության նախարարության աղբյուրը, որի խոսքերը մեջբերում է SANA պաշտոնական գործակալությունը:

# ԿԺԴՀ-ն հրավիրում է ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին

Պաշտոնական Փենյանը ՄԱԳԱՏԷ-ի տեսուչներին հրավիրել է այցելել իր տարածքում գտնվող միջուկային օբյեկտներ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

ՄԱԳԱՏԷ-ի ներկայացուցիչների խոսքերով, հնարավոր այցի մանրամասնությունները պետք է համաձայնեցվեն «բոլոր շահագրգիռ կողմերի հետ»: Առայժմ որոշում ընդունված չէ, նշում են գործակալությունում, ավելացնելով, որ պաշտպանական հրավերը ստացվել է դեռ մարտի 16-ին:

ՄԱԳԱՏԷ-ի փորձագետներին հրավիրելը հնարավոր դարձավ ԿԺԴՀ-ԱՄՆ գործարքի կնքումից հետո, որի մասին հաղորդվել էր փետրվարի վերջերին: Մասնավորապես «**Ազգը**» գրել էր, որ հյուսիսկորեացիները համաձայնել են իրենց միջուկային ծրագիրը սառեցնել ԱՄՆ-ի պարենային օգնության դիմաց:

Համաձայնագրի շրջանակներում ԿԺԴՀ իշխանությունները համաձայնել էին դադարեցնել միջուկային զենքի փորձարկումները եւ հեռահար հրթիռների արձակումները, ինչպես նաեւ ընդունել միջազգային դիտորդների: Սակայն մարտի 18-ին հայտնի դարձավ, որ ԿԺԴՀ-ն մտադրվել է «Ընխա-3» մղիչ հրթիռ արձակել կապի արբանյակ ուղեծիր դուրս բերելու համար: Թեեւ հյուսիսկորեացիները շեշտում են արձակման բացառապես խաղաղ բնույթը, ԱՄՆ-ը եւ Հարավային Կորեան երկյուղներ ունեն, որ այն կարող է քող ծառայել բալիստիկ հրթիռների փորձարկման համար:

ՄԱԳԱՏԷ-ի տեսուչները ԿԺԴՀ-ից արտաքսվեցին 2009-ին: Առիթը «Ընխա-2» մղիչ հրթիռի արձակումից հետո ՄԱԿ-ի ձեռնարկած հակակորեական պատժամիջոցներն էին: Հենց այն ժամանակ էլ ԿԺԴՀ-ն դուրս եկավ իր զինաթափման ծրագրին նվիրված վեցակողմ բանակցություններից:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

# «Աբրահամ Լինքոլն» ավիակիրը մտել է Պարսից ծոց

**Ամերիկյան ծովուժի «Աբրահամ Լինքոլն» ատոմային ավիակիրը ուղեկցող պահակային ռազմանավերի հետ երեկ Հորմուզի նեղուցով անարգել մտել է Պարսից ծոց: Այդ մասին հաղորդում է ԱՄՆ ծովուժի տեղեկատվական ծառայությունը: Սպասվում է, որ ավիակիրը տարածաշրջանի նավահանգիստներից մեկը կմտնի պաշարները համալրելու:**

**Միաժամանակ Արաբական ծովի հյուսիսում, Իրանի հարավարեւմտյան ափերի մոտ մնում է ԱՄՆ ծովուժի ավիակրային հարվածային խումբը «Կառլ Վինսոն» ավիակրի գլխավորությամբ: Խումբը ավիացիոն աջակցություն է ցույց տալիս Աֆղանստանում տեղաբաշխված ՆԱՏՕ-ի զորքերին:**

**Նախօրեին ավիակիրը հայտնվել էր սաստիկ ավազամրրիկի մեջ, եւ տախտակամածային ավիացիան ստիպված դադարեցրել էր թռիչքները: Նաեւ հաղորդվում է, որ Ջիբրալթարի նեղուցին է մոտենում ավիակրային հարվածային խումբ «Էնտերփրայզ» ավիակրի գլխավորությամբ:**

**Միջերկրական ծովում մարտական հերթապահություն անող մի խումբ ռազմանավեր նույնպես մեկնելու են Պարսից ծոց, որտեղ կմնան ի դեմս հակաիրանական պատերազմի, նշում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Սպասվում է, որ «Էնտերփրայզը» իր ավելի քան յոթնամյա արշավի մեծ մասը կանցկացնի ԱՄՆ ծովուժի 5-րդ օպերատիվ նավատորմի կազմում, որի շտաբը Բահրեյնում է:**

**Այդ ավիակրի տախտակամածային ավիացիան 1988-ին արդեն ռմբակոծել է Իրանը՝ ի պատասխան Պարսից ծոցի ականապատման:**

**Հրամանատարի՝ դերծովակալ Թեդ Քարտերի խոսքերով, ավիակրային հարվածային խումբը «պատրաստ է մասնակցել ամեն տեսակ գործողությունների՝ ծովագնացության ազատության ապահովմանը, ուժի ցուցադրմանը եւ այլն»:**



**Ամերիկյան նոր ռազմանավերը հավանաբար կհերթապահեն Հորմուզի նեղուցի շրջանում, որտեղով արտահանվում է աշխարհում արդյունահանվող նավթի մոտ 25 տոկոսը:**

# 45-ից հետո ավելի՞ երջանիկ...

**Մի նոր ուսումնասիրությամբ պարզվել է, որ 45 տարեկանից հետո մարդիկ իրենց ավելի երջանիկ են զգում, եւ որ ավելորդ քաշը արգելք չէ հետագա տարիները վայելելու համար: Ինչո՞ւ: Հավանաբար պատճառը ավելի քիչ սպասելիքներն են...**

**Մենք գուցե տանջվենք կախվող թշերից կամ դժվարանանք Ա-ից Ֆ-ն կարդալ, բայց միջին տարիքին հասնելը եւ ավելի տարիքով դառնալը խոչընդոտ չեն երջանկության համար: Ընդհակառակը:**

**Հարցմամբ, որն անցկացվել է Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի 10 հազ. բնակիչների հետ, պարզվել է, որ տարիքի հետ բարձրանում է մարդկանց մտավոր կյանքի որակը՝ չնայած ֆիզիկական կյանքի որակի անկմանը: Այս ուսումնասիրությունը կարծես հաստատում է նախկինում կատարված մի այլ հետազոտության արդյունքները, ըստ որի 40-ին մոտ տարիքում ամենահավանականն է, որ դեպրեսիան գլուխ բարձրացնի:**

**Ուսումնասիրությունը կատարել է Մեծ Բրիտանիայի Ուորվիք համալսարանը, կյանքի որակը չափվել է ութ տարբեր գործոններով՝ ներառյալ ընդհանուր առողջությունը, ցավը, սոցիալական գործունեությունը եւ մտավոր առողջությունը:**

**Ուսումնասիրության ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր Սավերիո Ստրենջը ասում է. «Ակնհայտ է, որ մարդկանց կյանքի ֆիզիկական որակը տարիքի հետ ընկնում է, բայց նրանց մտավոր որակները, ընդհակառակը, բարելավվում են:**

**Մենք կարծում ենք, որ սա կարող է պայմանավորված լինել ընդօրինակելու ավելի լավ ունակություններով: Այս կարծիքին հանգել է նաեւ նախորդ հետազոտությունը, որը պարզել է, որ ավելի տարիքով մարդկանց ներքին մեխանիզմը հակված է ավելի լավ դիմակայելու դժվարություններին ու ծանր պայմաններին, քան երիտասարդներինը»:**

**«Դա կարող է պայմանավորված լինել նաեւ կյանքից ավելի քիչ սպասելիքներով, քանի որ ավելի տարիքով մարդիկ ավելի քիչ են իրենք իրենց ճնշում անձնական եւ մասնագիտական ոլորտներում»:**

**Նախորդ հետազոտությունը, որը ղեկավարում էր Ուորվիք համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Օսվալդը, այն կարծիքին էր հանգել, որ երջանկությունը տարիքի համեմատ մի Ս-աձեւ կոր է հիշեցնում, որի ամենացածր կետերը 40-ին մոտ տարիքում են գտնվում, որից հետո այն նորից սկսում է բարձրանալ: Եվ կանանց, և՛ տղամարդկանց համար Մեծ Բրիտանիայում դեպրեսիայի ամենաբարձր մակարդակը մոտավորապես 44 տարեկանում է:**

**«Թե ինչու է Ս-աձեւ կորը նույն տեսքն ունենում զարգացած եւ զարգացող աշխարհի տարբեր մասերում, անհայտ է», ավելացնում է Օսվալդը:**

**«Այնուամենայնիվ, հավանաբար այս ամենի բացատրությունն այն է, որ մարդիկ սովորում են հարմարվել իրենց ուժեղ եւ թույլ կողմերին եւ իրենց կյանքի կեսին հասնելով՝ սկսում են ճնշել իրենց անիրագործելի ձգտումները»:**

**«Եվ միայն 50 տարեկանից սկսած մարդկանց մեծ մասը դուրս է գալիս այս ծանր շրջանից: Բայց այս ամենի մեջ քաջալերում է այն, որ 70 տարեկանում, եթե ֆիզիկապես դեռ նորմալ վիճակում եք, դուք մոտավորապես նույնքան երջանիկ եք եւ մտավոր առումով նույնքան առողջ, որքան 20 տարեկանում: Հավանաբար, տեղեկանալով, որ կյանքի կեսերին նմանատիպ զգացողությունները նորմալ են, մարդիկ կկարողանան ավելի հեշտ հաղթահարել դժվար փուլը», եզրահանգում է պրոֆեսորը:**

«Գարդիան»

Թարգմ.՝

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

# Շիրվանզադեի «Ազգային գործիչը» բեմադրվեց Բեյրութում

Հայկական բարեգործական ընդհանուր միության Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախումբը 53 տարի անդադար ծառայել է լիբանանահայ բեմին ու նպաստել հայապահպանման կարեւոր գործին: Կես դարից ավել թատերախմբում իրենց ներդրումն են ունեցել սիրողական մակարդակի դերասաններ, պրոֆեսիոնալ հայտնի բեմադրիչներ: Թատերախմբի անցած ստեղծագործական ուղուն **«Ազգը»** անդրադարձել է բազմիցս ու ներկայացրել բոլոր ձեռքբերումները: Վերջին փայլուն հաջողությունը, որ կայացավ մարտի 8-ին, հայ դասական Ալեքսանդր Շիրվանզադեի «Ազգային գործիչը» երկմասանոց քաղաքական սատիրան էր: Պիեսը բեմադրելու համար կրկին Բեյրութ էր հրավիրվել պրոֆեսոր **Երվանդ Ղազանչյանը**, որն, ի դեպ, պրն Ղազանչյանն արդեն 11 բեմադրություն իրականացրել է «Վահրամ Փափազյան» թատերախմբի հետ, ու այդ թատերախումբը համարվում է Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի քույր թատրոնը:



**«Ազգը»** հանդիպեց Երվանդ Ղազանչյանի հետ ու խնդրեց պատմել, թե ինչպես են անցել բեմադրության 8 օրերը եւ արդյոք թատերախմբում կա՞ն փոփոխություններ: «Արդեն 12-րդ անգամ ես սիրով աշխատեցի իմ հարազատ «Վահրամ Փափազյան» թատերախմբի հետ: Այս տարին առանձնահատուկ էր, որովհետեւ բացվեց նաեւ ՀԲԸՄ «Էհրամջյան» մշակույթի կենտրոնը, որտեղ առանձնացվել են հատուկ փորձասենյակներ «Վահրամ Փափազյան» թատերախմբի համար: Երկհարկանի գեղեցիկ վերանորոգված շենքի ընդարձակ դահլիճում շուրջ երկու ամիս ընթանում էին թատերախմբի փորձերը: Ուրախալի է, որ թատերախումբը համալրվել է հինգ նոր, երիտասարդ անդամներով, որոնք առաջին անգամ էին բեմ բարձրանում, եւ Արփի Ավետիքյանի, Հարութ Սամոյանի, Հարութ Թորոսյանի, Մակի Վասիլյանի հետ մի հրաշալի կուռ թատերախումբ դարձան: Ներկայացումը ցուցադրվեց 8 անգամ Բուրջ Համուդի Հակոբ Տեր-Մելքոնյան թատերասրահում, որտեղ ասեղ գցելու տեղ չկար»: Ինչպես նշեց պրն Ղազանչյանը, քույր թատրոնի հետ համագործակցությունը շարունակվելու է եւ արդեն ծրագրված է հաջորդ տարի նոր բեմադրության հարցը:

Ավելացնենք, որ «Ազգային գործիչը» բեմադրությունը լայն արձագանք է գտել լիբանանահայերի շրջանում եւ արժանացել բարձր գնահատանքի: Բեմադրության առաջնախաղից հետո թատերախմբի ատենապետ Տրդատ Ավետիքյանը ջերմ ու գնահատանքի խոսքեր է ասել պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանին՝ եւս մեկ հրաշալի թատերախաղ բեմադրելու եւ լիբանանահայությանը տոնական տրամադրություններ, տոնական անմոռանալի 8 օրեր պարգեւելու համար: Երվանդ Ղազանչյանն իր շնորհակալությունն է հայտնել ՀԲԸՄ-ին, թատերախմբին ու բոլոր նրանց, ովքեր ջանք չեն խնայել օգնելու, աջակցելու թատերախմբին ու բեմադրության կայացմանը: Ընթերցվել են նաեւ Հայաստանից ստացված մեկ տասնյակ շնորհավորական հեռագրեր առաջնախաղի առիթով:

Տեղեկացնենք նաեւ, որ «Էհրամջյան» մշակութային սրահի բացման առիթով ՀԲԸՄ-ն հատուկ ճաշկերույթ էր կազմակերպել, որի ժամանակ պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանին «Հայ թատրոնին անսահման նվիրումի եւ վաստակաշատ ներդրումի համար» ՀԲԸՄ նախագահ **Պերճ Սեդրակյանը** անձամբ հանձնել է հատուկ մրցանակ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ուկրաինայի մշակույթի օրեր՝ մարտի 21-28-ը

Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ Ուկրաինայի մշակույթի եւ արվեստների նախարարության միջեւ 2008-2012 թթ. մշակութային համագործակցության ծրագրի դրույթներին համապատասխան, Երեւանում եւ հանրապետության մարզերում փոխադարձաբար կանցկացվեն Ուկրաինայի մշակույթի օրեր, տեղեկացնում է ՀՀ մշակույթի նախարարությունից ստացված հաղորդագրությունը: Այդ առիթով Հայաստան են ժամանել Ուկրաինայի պաշտոնական պատվիրակությունը, «Всесвит» ամսագրի գլխավոր խմբագիր Օլեգ Միկիտենկոն, Ուկրաինայի նկարիչների միության նախագահ Միկոլա Կիշչուկը, «Киевська камерата» մենակատարների ազգային անսամբլի գլխ. տնօրեն եւ գեղ. ղեկ. Վալերի Մատյուխինը, «Галицкі передзвони» մունիցիպալ երգչախմբի գեղ. ղեկ. Իգոր Դեմյանեցը՝ գլխավորությամբ Ուկրաինայի մշակույթի նախարար Միխայիլ Կոզինյակի:

Ս. Ս.

# Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գարնանային համերգաշար

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մեկնարկել է վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղ. ղեկավար եւ գլխ. դիրիժոր՝ Էդ. Թոփչյան) գարնանային համերգաշարը:




Տեղեկացնենք, որ մարտի 23-ին, ժամը 19:00-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա հերթական համերգը: Ծրագրում.

Մոցարտ՝ «Սիմֆոնիա թիվ 36», Բեթհովեն՝ «Ջութակի կոնցերտ»: Համերգին հրավիրվել է անվանի ջութակահար **Անտոն Սորոկովը** (Ավստրիա): Դիրիժոր՝ **Էդուարդ Թոփչյան**:




**Մայիսի 26-ին, ժամը 19:00-ին նույն դահլիճում ֆիլհարմոնիկը հատուկ հուշ-երեկո է նվիրել երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանին, որի ընթացքում կհնչեն բազմաթիվ ստեղծագործություններ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր Էդուարդ Թոփչյանի գլխավորությամբ:**

# Ինքնատիպ եւ ուշագրավ ինքնալրագիտարան

**Վանիկ Սանթրյանը ճանաչված դեմք է ո՛չ միայն բովանդակ հայաշխարհում՝ Մայր հայրենիքում, Արցախում, Սփյուռքում, այլեւ՝ այլազգի շրջանակներից շատերում: Եվ նա մեծ ճանաչում է ձեռք բերել լրագրական, հրապարակագրական երկարատեւ եւ բեղուն աշխատանքի շնորհիվ:**

**Վ. Սանթրյանի մասնագիտական գործունեությունը լայն հնարավորություն է ստեղծել, որ նա շփվի տարբեր հասարակական-քաղաքական, մշակութային կազմակերպությունների, տարբեր զբաղմունքներ ունեցող տասնյակ հարյուրավոր մարդկանց հետ: 1957-ին ավարտելով Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժինը՝ հինգ տարի որպես լրագրող աշխատել է «Երեւան» (հետագայում՝ «Երեկոյան Երեւան») թերթի խմբագրությունում: 1962-ից մինչեւ 2010 թ. (մոտ 4 տասնամյակ) եղել է Արմենպրեսի եռանդուն աշխատակիցներից մեկը: Վերջին տարիներին թղթակցում է «Հայաստանի Հանրապետություն» թերթին: Հասկանալի է, որ լրագրական երկարամյա գործունեության ընթացքում Վ. Սանթրյանը գրել ու հրապարակել է հազարավոր հոդվածներ: Միաժամանակ հավելեմ, որ նա 50-ից ավելի գրքերի հեղինակ է, գրքեր, որոնք նվիրված են նշանավոր մարդկանց գործունեությանը, Արցախյան ազգային-ազատագրական պայքարին, Հայաստանի պատմության կարեւոր իրադարձություններին եւ այլ դեպքերի ու երեւույթների:**




**Եվ այս ամենից էլ ծնվել է տաղանդավոր լրագրողի, գեղանկարչի, գրողի ու հրապարակագրի լայն ճանաչումը: Այդ ճանաչումը առիթ է դարձել, որ հարյուրավոր, տասնյակհարյուրավոր մարդիկ իրենց ստեղծած գրքերը ամենատարբեր բովանդակություն ունեցող ընծայագրերով նվիրեն Վանիկ Սանթրյանին՝ այդ կերպ հայտնելով իրենց երախտիքի ջերմ խոսքերը: Եվ այդ ընծայագրերից ու տարբեր բնույթի հանդիպումներից ծնվել է Վանիկ Սանթրյանի լայնընդգրկուն ու ծավալուն (614 էջ) նոր գիրքը, որ 2011-ին շքեղ կազմով ու բարձրորակ թղթով հրատարակել է Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը՝ «Ձեր ընծայագրերի հետքերով» վերնագրով:**

**Վանիկ Սանթրյանի այս ծավալուն գիրքը ինքնատիպ ինքնալրագիտարան է, մի յուրօրինակ զրույց բազմաթիվ մարդկանց հետ, որոնք պատիվ են արել հեղինակին՝ գրքեր ընծայելու: Շատերն էլ գրքում հայտնվել են՝ ելնելով բազմաբնույթ հանդիպումներից: Ընծայագրերի հեղինակները, տարբեր դրվագներում հանդիպած մարդիկ հայեր են, կան նաեւ այլազգիներ: Նրանք գրողներ են, գրականագետներ, գիտնականներ, դերասաններ, երգիչներ, նկարիչներ, քաղաքական գործիչներ, բարերարներ, Հայ եկեղեցու նշանավոր գործիչներ: Գրքում բնութագրական խոսքեր կան՝ նվիրված հայոց կաթողիկոսներ Վազգեն Ա-ին, Գարեգին Ա-ին, Գարեգին Բ-ին, Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանին: Փոքրաթիվ չեն նաեւ սփյուռքահայ այն բարերարները, որոնց մասին ջերմ խոսքեր են ասված եւ որոնց լուսանկարները զետեղված են գրքում:**

**Հեղինակը երբեմն շատ կարճ, մի քանի տողով, երբեմն էլ առավել ծավալուն ներկայացնում է ընծայագրողների, ինչպես նաեւ տարբեր առիթներով հանրապետության մարդկանց կենսագրությունները կամ առանձին դիպվածներ, խոսքային բնութագրումներ:**

**Ընծայագրերի այս ինքնալրագիտարանում ընթերցողը հանդիպում է նաեւ անցյալ ժամանակների հայազգի եւ օտարազգի առանձին նշանավոր դեմքերի, օրինակ՝ Լոռիս-Մելիքովին՝ իր համառոտ կենսագրությամբ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենին՝ իր հայանպաստ գործունեությամբ, աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրին եւ ուրիշներին:**

**Գրքում ներկայացված մարդկանց մեծագույն մասի կենսագրություններին, բնութագրերին զուգակցվում են նաեւ լուսանկարները, որոնք մի քանի հարյուրների են հասնում եւ առավել ուշագրավ դարձնում աշխատությունը:**

**Գրախոսվող աշխատությունը ինքնալրագիտարանի առաջին հատորն է, որն ընդգրկում է Ա-Կ, գրերով սկսվող ազգանուններն ու անունները: Շուտով ընթերցողները կունենան 2-րդ հատորը, որն ընդգրկելու է Հ-Ֆ տառերով սկսվող ազգանուններ կրող անձնավորություններին:**

**Ներկա հատորը հրատարակվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Զավեն Եկավյանի աջակցությամբ, որի համար էլ հեղինակը հայտնում է իր շնորհակալությունը:**

**Այս ինքնատիպ ժանրի ինքնալրագիտարանը հարստացնում է մեր մշակույթի պատմությունը եւ առատ տեղեկություններ հաղորդում հատկապես մշակութային հարցեր լուսաբանող լրագրողներին, ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողներին, դասախոսներին եւ ընթերցողների լայն շրջաններին:**

ՌՈՍԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ

# Նվիրվում է Հովսեփ Օրբելու 125-ամյակին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան եւ գիտական հասարակությունը մշակել են միջոցառումների շարք, որը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադիր նախագահ Հովսեփ Օրբելու 125-ամյակին, տեղեկացնում է ԳԱԱ-ից ստացված հաղորդագրությունը: Մարտի 20-ին լրացավ հանրահայտ արեւելագետ եւ հայագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակը եւ այդ առիթով ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ապրիլի 20-ին հանդես կգա գիտական զեկուցմամբ՝ «Ակադեմիկոս Հ. Օրբելու ներդրումը արեւելագիտության եւ հայագիտության զարգացման ասպարեզում» թեմայով:

Իսկ սեպտեմբերի 24-27-ը, Երեւանում եւ Ծաղկաձորում կկազմակերպվի միջազգային գիտաժողով: Կկազմակերպվի «Օրբելի-125» թեմատիկ գրքային ցուցահանդես, կհրատարակվի գիտաժողովների զեկուցումների ժողովածու, կստեղծվի Օրբելու աշխատությունների թվային շտեմարան:

Ս. Ս.

# Սուրեն Չախալյան. «Երիտասարդներով էլ «Փյունիկը» պայքարելու է չեմպիոնության համար»



Օրերս Դուբայում անցկացրած ուսումնամարզական հավաքից Երեւան վերադարձավ «Փյունիկը», որը սեփական մարզաբազայում շարունակում է նախապատրաստվել նոր մրցաշրջանին: Երեկ կայացած հերթական պարապմունքից հետո «Փյունիկի» գլխավոր մարզիչ Սուրեն Չախալյանը հանդիպեց լրագրողներին: Նա նշեց, որ թիմը լրջորեն է նախապատրաստվել նոր մրցաշրջանին՝ անցկացնելով ուսումնամարզական երեք հավաք: Այդ հավաքների ընթացքում հաջողվել է իրականացնել նախատեսված ողջ ծրագիրը: Անցկացրած մի շարք ստուգողական հանդիպումները հնարավորություն են ընձեռել ստուգելու ֆուտբոլիստների խաղային ունակությունները եւ որոշելու թիմի հիմնական կազմը: Գլխավոր մարզիչը գոհ է կատարված աշխատանքից: Կարեւոր է, որ այսօր թիմում չկան վնասվածք ունեցող ֆուտբոլիստներ: Ծանր վնասվածքից ու վիրահատությունից հետո վերջապես ապաքինվել է Դավիթ Մանոյանը, որն աստիճանաբար վերագտնում է իր խաղն ու լավ մարզավիճակ է ձեռք բերում: Վատ տպավորություն չեն թողնում նաեւ թիմի 2 նորեկները, որոնց հետ «Փյունիկը» պայմանագրեր է կնքել:

Ինչպես միշտ, «Փյունիկը» պայքարելու է չեմպիոնության համար: Ակումբի ռազմավարությունն այս տարի էլ չի փոխվել: Թիմը համալրվել է սեփական մարզադպրոցի սաներով: Չի բացառվում, որ անցյալ տարվա նման նոր մրցաշրջանի ընթացքում էլ «Փյունիկում» աչքի ընկնող մի քանի ֆուտբոլիստներ մեկնեն արտերկիր: Ըստ Սուրեն Չախալյանի, դա կնպաստի հայկական ֆուտբոլի զարգացմանը: Իսկ հանուն դրա ակումբը պատրաստ է նույնիսկ զոհաբերել իր արդյունքները երկրի առաջնությունում ու գավաթի խաղարկությունում: Իհարկե, դա չի նշանակում, թե «Փյունիկը» լրջորեն չի պայքարելու ոսկե մեդալների համար: Ինչ վերաբերում է Եվրոպայի լիգայի խաղարկությանը, ապա նույնիսկ այդ մրցաշարի համար ակումբը չի պատրաստվում համալրել թիմը լեգեոնականներով: Գլխավոր մարզչի կարծիքով այդ մրցաշարը վարպետության հիանալի դպրոց կլինի թիմի երիտասարդ ֆուտբոլիստների համար, որոնք պետք է ձգտեն դրսեւորել իրենց:

Սուրեն Չախալյանը համոզված է, որ իր գլխավորած «Փյունիկը» ոչնչով չի տարբերվի Վարդան Մինասյանի օրոք կազմավորված թիմից. «Ես նոր մարդ չեմ «Փյունիկում», 10 տարի այս ակումբում եմ: Թիմի խաղաոճում ոչինչ չի փոխվի: Ակումբն ունի իր ռազմավարությունը, որով էլ առաջնորդվելու ենք»:

Քանի որ առաջնության մեկնարկային տուրը հետաձգվել է, ուստի մարտի 25-ին «Փյունիկն» ընկերական խաղ կանցկացնի «Փյունիկ-2-ի» հետ: Սուրեն Չախալյանի կարծիքով, մեկնարկելիք առաջնությունը բավականին հետաքրքրական պայքարում կանցնի, քանի որ թիմերը համեմատաբար հավասար են: Ճիշտ է, «Ուլիսն» իր կազմով առանձնանում է մյուսներից, քանի որ փորձառու ֆուտբոլիստներ են հանդես գալիս: Սակայն բոլոր թիմերին էլ Սուրեն Չախալյանը լուրջ մրցակից է համարում:

# Մեսին աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է




Հանրահայտ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի տվյալներով, իսպանական «Բարսելոնի» եւ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսին աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է: Նրա տարեկան եկամուտը 33 մլն եվրո է: Մեսիի աշխատավարձը «Բարսելոնում» տարեկան 10,5 մլն եվրո է: 1,5 մլն եվրո էլ նա ստանում է որպես պարգեւավճար: Նրա եկամտի գլխավոր աղբյուրը գովազդային պայմանագրերն են, որոնցով Մեսին 21 մլն եվրո է վաստակում: Մեսին գովազդային պայմանագրեր ունի կնքած «Ադիդասի», «Հերբալայֆի», «Պեպսի Կոլայի» եւ «Ժիլետի» հետ:

Ճիշտ է, գովազդային պայմանագրերի առումով Մեսիին գերազանցում է 37-ամյա Դեւիդ Բեքհեմը: Գովազդից նա տարեկան 26 մլն եվրո է ստանում: «Լոս Անջելես Գելեքսին» նրան 5,5 մլն եվրո է վճարում: Բեքհեմի տարեկան ընդհանուր եկամուտը 31,5 մլն եվրո է կազմում: Այս ցուցանիշով նա աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստների ցանկում 2-րդ տեղում է:

Լավագույն եռյակը եզրափակում է Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուն: «Ռեալում» նա 13 մլն եվրո է վաստակում, իսկ գովազդային պայմանագրերով եւս 16,2 մլն եվրո է ստանում: Նրա տարեկան ընդհանուր եկամուտը 29,2 մլն եվրո է:

Հետաքրքրական է, որ աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստ Սամուել Էտո'Օ-ն զբաղեցնում է ընդամենը 4-րդ հորիզոնականը: «Անժիի» հետ նախորդ տարվա ամռանը 3 տարվա պայմանագիր կնքած աֆրիկացի ֆուտբոլիստի տարեկան աշխատավարձը 20,5 մլն եվրո է: Նման բարձր աշխատավարձով կարող են պարծենալ միայն ԱՄՆ-ի բասկետբոլի եւ ամերիկյան ֆուտբոլի «աստղերը»: Սակայն հաշվի առնելով ԱՄՆ-ում հարկերի բարձր տոկոսը, Կոբի Բրայանտը, Լեբրոն Ջեյմսն ու Պեյտոն Մենինգն ավելի քիչ աշխատավարձ են ստանում, քան Սամուել Էտո'Օ-ն: Վերջինիս տարեկան ընդհանուր եկամուտը 23,3 մլն եվրո է:

Աշխարհի 20 ամենահարուստ ֆուտբոլիստների ցանկում տեղ են զբաղեցրել նաեւ Ուեյն Ռունին («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 20,6 մլն եվրո, Սերխիո Ագուերոն («Մանչեսթր Սիթի»)՝ 18,8 մլն, Յայա Տուրեն («Մանչեսթր Սիթի»)՝ 17,6 մլն, Ֆեռնանդո Տորեսը («Չելսի»)՝ 16,7 մլն, Կական («Ռեալ»)՝ 15,5 մլն, Ֆիլիպ Լամը («Բավարիա»)՝ 14,3 մլն, Զլատան Իբրահիմովիչը («Միլան»)՝ 14 մլն, Բաստիան Շվայնշտայգերը («Բավարիա»)՝ 13,9 մլն, Նեյմարը («Սանթոս»)՝ 13,8 մլն, Նիկոլյա Անելկան («Շանհայ Շենհուա»)՝ 13 մլն, Ֆրենկ Լեմփարդը («Չելսի»)՝ 12,9 մլն, Դավիթ Սիլվան («Մանչեսթր Սիթի»)՝ 12,8 մլն, Դիդյե Դրոգբան («Չելսի»)՝ 12,6 մլն, Դարիո Կոնկան («Գուանչժոու Էվերգրանդ»)՝ 12,5 մլն, Ջանլուիջի Բուֆոնը («Յուվենտուս»)՝ 11,7 մլն եւ Ֆրանկ Ռիբերին («Բավարիա»)՝ 11,6 մլն:

ՖՈՒՏԲՈԼ

# Առաջնության մեկնարկը հետաձգվեց

Հաշվի առնելով եղանակային անբարենպաստ պայմանները, որոնց պատճառով խաղադաշտերը դեռ պատրաստ չեն ֆուտբոլային հանդիպումների անցկացման համար, ՀՖՖ-ն հետաձգել է մարտի 24-ին եւ 25-ին կայանալիք Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մեկնարկային տուրի հանդիպումները: Այսպիսով, ՀՀ 21-րդ առաջնությունը կմեկնարկի մարտի 31-ին կայանալիք 2-րդ տուրի հանդիպումներով:

Ինչպես հայտնի է, այս տարվա առաջնությունն անցկացվելու է 6 շրջանով եւ 2012-ին նախատեսված 32-րդ տուրի հանդիպումները նշանակված են դեկտեմբերի 1-ին եւ 2-ին: Հետաքրքրական է, թե այդ ժամանակ ինչպիսի՞ն կլինեն եղանակային պայմանները եւ արդյոք հնարավոր կլինի՞ անցկացնել հանդիպումները, թե՞ կրկին անհրաժեշտ կլինի հետաձգել խաղերը: Ավելորդ չէ նշել նաեւ, որ 2013-ին առաջնությունը վերսկսվելու է ավելի վաղ՝ մարտի սկզբներին: Ամենայն հավանականությամբ, դաշտերի հետ կապված նույն հիմնախնդիրները ծագելու են նաեւ հաջորդ գարնանը:

# Արոնյան-Կրամնիկ մրցամարտի կայքէջը գործում է

Ինչպես հայտնի է, աշխարհի ուժեղագույն շախմատիստներից երկուսը՝ Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Կրամնիկն ապրիլի 21-28-ը Ցյուրիխում 6 պարտիայից բաղկացած դասական շախմատի ընկերական մրցախաղ են անցկացնելու: Օրերս բացվել է այդ մրցամարտին նվիրված պաշտոնական կայքէջը՝ kramnikaronian.com, որում կով ժամը 15-ին կտրվի մրցամարտի 1-ին պարտիայի մեկնարկը: Մրցակարգի համաձայն, եթե մրցակիցները 30-րդ քայլից առաջ հաշտություն կնքեն, ապա նրանք պարտավոր են նույն օրը շախմատասերների համար արագ շախմատի պարտիա անցկացնել, որի արդյունքը բնականաբար չի հաշվարկվի:




կլուսաբանվեն 2800-ից բարձր գործակից ունեցող 2 շախմատիստների մրցախաղերը:

Մրցամարտի հանդիսավոր բացման արարողությունը կկայանա ապրիլի 20-ին, որի ժամանակ անվանի գրոսմայստերները կպատասխանեն լրագրողների հարցերին: Հաջորդ օրը տեղական ժամանա-

2-րդ պարտիայից հետո ապրիլի 23-ին մրցակիցները կհանգստանան: Եվս մեկ հանգստյան օր է նախատեսված ապրիլի 26-ին:

Հիշեցնենք, որ տարիներ առաջ Արոնյանն ու Կրամնիկը Երեւանում արագ շախմատի մրցախաղ էին անցկացրել, որում 4-2 հաշվով հաղթել էր հայ շախմատիստը:

# Գորյաչկինան ամենաերիտասարդ գրոսմայստերն է

Թուրքիայի Գազիանթեփ քաղաքում վերջերս ավարտված շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում 13-ամյա ռուսաստանցի Ալեքսանդրա Գորյաչկինան 11 հնարավորից վաստակելով 6 միավոր, 3-րդ անգամ լրացրեց միջազգային գրոսմայստերի նորման: Ռուս շախմատիստուհին դարձավ աշխարհի ամենաերիտասարդ միջազգային գրոսմայստերը: Ավելի փոքր տարիքում գրոսմայստերի պատվավոր տիտղոսին արժանացել է աշխարհի ներկայիս չեմպիոնուհի, չին շախմատիստուհի Հոու Յիֆանը:

# «Բարսելոնը» 21-րդ դարի ուժեղագույն ակումբն է

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է 21-րդ դարի Եվրոպայի ուժեղագույն 600 ակումբների դասակարգման ցուցակը: Այն գլխավորում է իսպանական «Բարսելոնը» 2917 միավորով: 2-րդ տեղում անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» է (2793): Լավագույն եռյակը եզրափակում է անգլիական մեկ այլ ակումբ՝ Լոնդոնի «Արսենալը» (2618): Լավագույն տասնյակում ընդգրկվել են նաեւ Մադրիդի «Ռեալը» (2569), «Միլանը» (2567), Մյունխենի «Բավարիան» (2544), «Լիվերպուլը» (2538), «Միլանը» (2490), «Չելսին» (2412) եւ «Ռոման» (2140):

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից ամենաբարձր վարկանիշն ունի Դոնեցկի «Շախտյորը», որը եզրափակում է 20 ուժեղագույն ակումբների ցանկը:

21-րդ դարի 600 ուժեղագույն ակումբների ցանկում ընդգրկված են հայկական 6 թիմեր: Բնականաբար, ամենաբարձր վարկանիշն ունի «Փյունիկը», որը 611,5 միավորով 187-րդ տեղում է: Եվ դա պատահական չէ, քանի որ 2001-2011-ի արդյունքներով «Փյունիկը» 10 անգամ ճանաչվել է Հայաստանի չեմպիոն, անցյալ տարի էլ գրավել է 2-րդ տեղը:

Հաջորդը «Միկան» է, որը 500,5 միավորով 264-րդ տեղում է: «Միկան» էլ այդ ընթացքում 6 անգամ նվաճել է Հայաստանի գավաթը, դարձել է արծաթե եւ բրոնզե մրցանակակիր: 465,5 միավորով 292-րդ տեղում «Բանանցն» է: Երեւանի «Արարատը» 237 միավորով զբաղեցրել է 545-րդ տեղը: ՀՀ չեմպիոն «Ուլիսը» 562-րդ տեղում է (228 միավոր), իսկ Գյումրիի «Շիրակը» 226,5 միավորով հանգրվանել է 565-րդ հորիզոնականում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Սփյուռքահայ Ժորժ Թոմասյանի իրավունքները ոտնահարված են



Անկախությունից հետո մեր երկրի ղեկավարները արտերկրներում համայնքի հետ հանդիպման ընթացքում մշտապես հորդորել են ու կոչ արել մայր հայրենիքում իրենց բիզնեսը ծավալել ու աշխատատեղեր բացել: Շատերը այդ կոչին ականջալուր եկան Հայաստան, գործ դրեցին: Սակայն կարճ ժամանակ անց նրանցից շատերը հայտնվեցին այնպիսի իրավիճակում, որ ստիպված եղան «թքել» ու հեռանալ: Իսկ պատճառները շատ են՝ տեղացի «լավ տղերը» փայատեր էին ուզում դառնալ (հիշենք մանկական խաղալիքների «Արմենթոյ» ընկերությունը- Մ. Մ.) կամ ահաբեկում էին, ամեն կերպ խոչընդոտներ ստեղծում եւ այլն: Այդ դեպքերից շատերին «**Ազգը**» անդրադարձել է: Այժմ էլ մի նոր, ինչպես ժողովուրդն է ասում «քցողի» է գնում, եւ արդեն 17 սփյուռքահայերի գումարները թալանվել են: Դրանց թվին ավելացել է եւս մեկը՝ 81-ամյա Ժորժ Թոմասյանը, որն արդեն 11 ամիս Հայաստանի դատական տարբեր ատյաններում չի կարողանում իր ներդրած միլիոնավոր դոլարները թալանողների դեմ քրեական գործ հարուցել:

Երեկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում վերսկսվեց Ժորժ Թոմասյանի եւ նրա ներկայացուցիչների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննությունը՝ դատավոր Արարատ Պետրոսյանի նախագահությամբ: Հիշեցնեմ, որ ներկայացված վերաքննիչ բողոքով Ժ. Թոմասյանը եւ նրա ներկայացուցիչները խնդրել են վարույթն իրականացնող մարմնի «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը վերացնել եւ պարտավորեցնել վերջինիս ձեռք բերված ապացույցներով հարուցել քրեական գործ: Գործի մանրամասներին «**Ազգը**» մի քանի անգամ անդրադարձել է: Դատական 3-րդ նիստը սկսվեց, եւ 30 րոպե անց պարզ դարձավ, որ դատախազ Արսեն Բեգինյանը չկարողացավ պատասխանել դատավոր Ա. Պետրոսյանի այն հարցին, թե «շինարարական կազմակերպությունը առանց լիցենզիայի շինարարության քանի՞ տոկոսն է իրականացրել եւ որքա՞ն է վնասի չափը»: Դատախազը դատարանից պահանջեց լրացուցիչ ժամանակ... նյութերին ծանոթանալու համար: Ժ. Թոմասյանի ներկայացուցիչ Սամվել Ջաղինյանը առարկեց, պատճառաբանելով, որ առանց լիցենզիայի «Դերչին» ՍՊԸ-ի կողմից չորս ամիս իրականացվել է շինարարություն, յուրացվել են ներդրված գումարները, պատճառվել են խոշոր չափի վնասներ սփյուռքահայ Ժ. Թոմասյանին եւ պետությանը: Իսկ թե ինչո՞ւ այս փաստին դատախազը չի տիրապետում, մնում է անհասկանալի: Նշենք, որ շենքի արժեքը կազմել է մոտ 45 միլիոն, ներդնողը վճարել է 75 միլիոն: «Այսինքն մինչ լիցենզիա հանելը արդեն 30 միլիոնի պակաս է եղել, չհաշված անորակ շինարարությունը (բետոնը մոտ 45 տոկոսով պակաս է եղել, Մ. Մ.), որը գործի նյութերում առկա է: Նաեւ նախագծից շեղումներ կան: Դատախազը նյութերին տեղյակ չէ, որովհետեւ այս ամենին իրենք նայում են մատների արանքով, ձեւական բնույթ է կրում՝ առանց փաստերի, մանրամասների մեջ կենտրոնանալու: 2011 թ. մայիսից գործը միտումնավոր ձգձգվում է: Չմոռանանք, որ Թոմասյանը 81 տարեկան է, վատառողջ, եւ ամեն անգամ նիստի ձգձգումը, անարդյունավետ գործելաոճը գալիս է ապացուցելու, որ միտումնավոր է արվում այս ամենը ու վերջը չի երեւում: Մինչդեռ Թոմասյանի շահերի պաշտպանների պահանջը ընդհանրապես պատճառաբանված չի եղել, եւ Սահմանադրական դատարանն արդեն իսկ դրան անդրադարձել է, որ չպատճառաբանված, չհիմնավորված որոշումները ենթակա են բեկանման եւ այդ դատական ակտը չի կարող մնալ ուժի մեջ: Դա գլխավոր հիմքն է, որ ՍԴ-ի եւ ԵԴ-ի նախադեպային որոշումները պարտադրում են, որ նման որոշումները բեկանեն, ինչը չի կատարվում: Մենք բոլոր դատական ատյանների որոշումներից հետո միանշանակ դիմելու ենք Եվրոդատարան», պարզաբանեց պրն Ջաղինյանը:

Ի վերջո դատավորը դատական նիստը հետաձգեց մեկ օրով: Հաջորդ նիստը նշանակվեց մարտի 22-ին ժամը 11-ին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՏԱՄՊՈՒԼ

# Զարաքոլուին սպառնում է մինչեւ 10 տարվա ազատազրկում

**Հրատարակիչ, մտավորական Ռագըփ Զարաքոլուի եւ պրոֆեսոր Բյուշրա Էրսանլիի նկատմամբ քրեական մեղադրանքն արդեն իսկ պատրաստ է եւ ուղարկվել է Ստամբուլի ծանր հանցագործությունների գծով թիվ 15 դատարան: Ստամբուլի հատուկ լիազորված դատախազ Ադնան Չիմենը դեռեւս երկուշաբթի առաջին ատյանի նշված դատարանին է հանձնել 2400 էջանոց մեղադրականը, որով Զարաքոլուն եւ Էրսանլին մեղադրվում են «ահաբեկչական կազմակերպություն ղեկավարելու եւ դրան աջակցելու մեջ»:**



**Ինչպես տեղեկացնում է թուրքական «TodaysZaman» կայքէջը, քրդամետ Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (BDP) սահմանադրական խմբի անդամ Էրսանլիին ներկայացվում է մինչեւ 15 տարվա ազատազրկում «ահաբեկչական կազմակերպություն ղեկավարելու համար», իսկ «Բելգե» հրատարակչության հեղինակ, ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Զարաքոլուին ներկայացվում է մեղադրանք «աջակցելու ահաբեկչական խմբի»՝ մինչեւ 10 տարվա ազատազրկմամբ:**

**Դեռեւս նախորդ տարվա նոյեմբերին ձերբակալված Էրսանլին եւ Զարաքոլուն, ենթադրաբար, կսպասեն մինչեւ 15 օր, երբ դատարանը մեղադրանքի հանդեպ վերաբերմունք կարտահայտի այնպիսի մի գործով, որով 193 կասկածյալներից 147-ը կալանավորված են:**

**Թուրքական պարբերականը հիշեցնում է, որ միջազգային «Amnesty International» կազմակերպությունը նամակ էր ուղարկել Թուրքիայի փոխվարչապետ Բեշիր Աթալային՝ կոչ անելով ազատ արձակել Զարաքոլուին եւ Էրսանլիին:**

Ա. Հ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշեր՝ մետաղադրամներ, թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է «Դրամանիշերի փորձաքննության գնահատման հանձնաժողով», որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում յուրաքանչյուր երկուշաբթի, ժամը 10:00-13:00-ն:

Տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 59-29-03, 56-16-55:

*ՀՀ կենտրոնական բանկ*

# Samsung Galaxy Nexus սմարթֆոնն՝ այժմ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում

**Այսուհետեւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում կարելի է ձեռք բերել նոր՝ Samsung Galaxy Nexus սմարթֆոնը:**

**Samsung Galaxy Nexus-ն ապահոված է այնպիսի բացառիկ հնարավորություններով, ինչպիսիք են՝ HD Super AMOLED էկրանը, գոգավոր դիզայնն ու սմարթֆոնի անգերազանցելի աշխատանքն ապահովող գերարագ dual core պրոցեսորը: Իսկ Android 4-ի ընձեռած հարուստ հնարավորությունների շնորհիվ այս սմարթֆոնը նվաճել է անգամ ամենապահանջկոտ հաճախորդների սրտերը:**




**Սմարթֆոնն արժե 349000 դրամ: Ձեռք բերելով այն՝ կարելի է մասնակցել «Սմարթ բոնուս» ծրագրին եւ ստանալ 174500 դրամ բոնուս: Ինչպես միշտ, հեռախոսը կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

www.azg.am

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**12 փետրվարի 2012թ.**

**Հիմնադրամի 2011թ. գործունեության մասին:**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Նոր Համբերդ գիտական կենտրոն» Հիմնադրամ :

2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից՝ 22.11.2007թ. պետական գրանցման վկայական՝ 03 Ա 077927:

3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Եր. Հալաբյան 34ա /5 հեռ. 35-20-08

4. Իրականացված ծրագրերը.

2012թ. ընթացքում շարունակվել են ստեղծվել գեյգերի հաշվիչների գոդոսկոպի էլեկտրոնիկան: Ստեղծված գոդոսկոպի մակերեսը կազմում է 50 քմ: Սկսված է չափումները:

5. Ֆինանսավորման աղբյուրները. Ծրագրերի ֆինանսավորումը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ակադեմիայի Լեբեդեւի անվան Ֆիզիկայի ինստիտուտի կողմից:

6. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 14 912 հազար դրամ:

7. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝14 912 հազար դրամ:

Հաստատված է

«Նոր Համբերդ գիտական կենտրոն» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2011թ. դեկտեմբերի 26-ին կայացած նիստի կողմից:

*Հիմնադրամի տնօրեն՝ Ա. Բարսեղյան*

*Հաշվապահ՝ Ն. Մարտիրոսյան*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: